նակ հնազանդողք ինքնակալ տերանց, եթէ կա-
լով մնասցեն 'ի հնազանդութիւն վասն երկիւղի
և ապա օրաւուր թոյլանալոց է սարսափելու-
թիւնն երկիւղին իշխանին իւրեանց 'ի ծանօ-
թութիւնս հնազանդողին և օրաւուր պնտանալոց
է սիրտ հնազանդելոց, մինչև ծայր յուսահատու-
թեան կատարումն լինի, որպէս 'ի վեր ասացաք
առնուլ վրէժ նենգաւորութեամբ որ է մեղք մեծ
ոմն քաջութեամբ ձեռնամուխ, որն հեղգեալ դա-
ւաճանութեամբ դեղակուր, ոմն երկչոտ փախըս-
տամբութեամբ ապստամբ և այլն, և 'ի պատ-
ճառէ այսպիսի գործոց գրգռի հանդարտութիւն
բնութեան մերոյ յարիցեն տգէտք առ 'ի վրէժ-
խնդիր անկանի գահ, խորտակի աթոռ իշխա-
նութեան այլանդակ և գազանաբարուք գտցեն
ժամանակ կատարել զչար ցանկութիւն սրտից
իւրեանց իբրև անասուն փառաւորին 'ի վերայ
անօրէնութեան շարժմանց իւրեանց ոչ նայելով
և ոչ 'ի միտ առնուլով թէ՝ որ ոք անօրէնութիւն
և չարութիւն որ ինքնակամ գործովք գործեցեալ,
մի աւելցի վարձ անօրէնութեան գործոց իւրոց
առաւել քան թէ կատարելոյ միմիայն ցանկու-
թիւն հնգից զգայեարանաց բնութեան իւրոյ
որում բազմից առաւել և դիւրին և հեշտու-
թեամբ կատարել կարէ նոյն ըստ Օրինօք և
գտանել զինքն մարդ 'ի պատուոյ 'ի յերեսս եր-
կրի, և արժանի 'ի կեանս յաւիտենականս 'ի հան-